ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով Սիմոնյան կրթական հիմնադրամի գրությունը, ղեկավարվելով «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սիմոնյան կրթական հիմնադրամին /հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672/ Երևանի Հալաբյան փողոցի հ.2 հասցեում գտնվող Թումանյանի անվան զբոսայգու զբաղեցրած հողամասի մասով, ընթացիկ տարվա համար տրամադրել հողի հարկի գծով արտոնություն՝ 2.244.769 /երկու միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր վաթսունինը/ դրամ գումարի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի Թումանյանի անվան զբոսայգու զբաղեցրած հողամասն անհատույց օգտագործման իրավունքով պատկանում է Սիմոնյան կրթական հիմնադրամին /վկայական՝ 20.09.2017թ. հ.20092017-01-0206/: Հաշվի առնելով Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից այգին բարեկարգելու ու պահպանելու նպատակով իրականացված մեծածավալ աշխատանքը և ներդրված ֆինանսական միջոցները՝ Երևան քաղաքի ավագանու 11.02.2014թ. N111-Ա, 10.02.2015թ. N287-Ա, 18.03.2016թ. հ. N491-Ա և 17.03.2017թ. հ. 683-Ա որոշումներով նշված կազմակերպությանը 2014, 2015, 2016 և 2017 թվականների համար տրամադրվել էր հողի հարկի գծով արտոնություն:

Հալաբյան փողոցի հ.2 հասցեում հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող՝ հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասի ընթացիկ 2018 թվականի հողի հարկի հաշվարկային գումարը կազմում է 2.244.769 /երկու միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր վաթսունինը/ դրամ, որի համար 13.02.2018թ. գրությամբ Սիմոնյան կրթական հիմնադրամի գլխավոր տնօրենը դիմել է Երևանի քաղաքապետին՝ հողի հարկի արտոնություն ստանալու խնդրանքով, ներկայացնելով ինչպես նախկինում, այնպես էլ 2017 թվականի ընթացքում հիմնադրամի կողմից այգու պահպանման և բարեկարգման համար իրականացված աշխատանքները և ծախսերը՝ նշելով, որ հիմնադրամը տվյալ տարածքում իրականացնում է բարեգործական կրթական ծրագիր, որը շահ ստանալու նպատակ չի հետապնդում:

Կարևորելով հանրության համար Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից Երևանի Հալաբյան փողոցի հ.2 հասցեում գտնվող զբոսայգու բարեկարգման, այգու պահպանման ուղղությամբ կատարված մեծածավալ աշխատանքների, այդ տարածքում իրականացվող կրթական ծրագրերի դերն ու նշանակությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այգու տարածքում մինչ այժմ իրականացված բարեկարգումները որևէ կերպ չեն հետապնդում շահ ստանալու նպատակ, ինչպես նաև կարևորելով Թումանյանի անվան զբոսայգին մշտապես ըստ նշանակությամբ օգտագործվելու և բարեկարգված պահելու անհրաժեշտությունը, առաջարկվում է հողի հարկի գծով արտոնություն տրամադրել Սիմոնյան կրթական հիմնադրամին՝ ընթացիկ 2018 թվականի հաշվարկային գումարի մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի Հալաբյան փողոցի հ.2 հասցեում գտնվող Սիմոնյան կրթական հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող՝ հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասի ընթացիկ 2018 թվականի հողի հարկի հաշվարկային գումարը կազմում է 2.244.769 /երկու միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր վաթսունինը/ դրամ, որի համար Սիմոնյան կրթական հիմնադրամի գլխավոր տնօրենը դիմել է օրենքով սահմանված կարգով հողի հարկի արտոնություն ստանալու խնդրանքով, նշելով, որ հիմնադրամը, հանդիսանալով քննարկվող զբոսայգու օգտագործողը, այն պահպանում է պատշաճ վիճակում, դրա նշանակությանը համապատասխան՝ այդ նպատակով կատարելով մեծածավալ աշխատանք և ծախսեր, մինչդեռ՝ հիմնադրամը տվյալ տարածքում իրականացնում է բարեգործական կրթական ծրագիր, որը շահ ստանալու նպատակ չի հետապնդում:

Հաշվի առնելով Սիմոնյան կրթական հիմնադրամի գլխավոր տնօրենի գրությունը՝ նպատակահարմար եմ գտնում տրամադրել 2.244.769 /երկու միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր վաթսունինը/ դրամի չափով հողի հարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ.1

« ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ.2

§ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ¦ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ